



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲՍՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ի Ն Ձ Ո Ւ

ԱՐՅԱԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ
ԵՆ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա Մ Ի Թ

1111

ԳՅՈՒԳ. ԲՍՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

338.58 (47) Ն. ՍԱՄՈՐՈՒԿՈՎ



Ս

A 4191

Ի Ն Ձ Ո Ւ

ԱՐՅՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ
ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ

776



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ, — ՅԵՐԵՎԱՆ, 1930

Հր. № 1379. Գրառեպար № 5494 (բ) Տիրած 2500.

Պետերատի առաջին տպարան Վաղարշապատում:

Պատվեր № 128

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ

Մեր սոցիալիստական շինարարութիւնն աշու-
ղութիւններն ստուգելիս մենք ուշադրութիւն
ենք դարձնում վոչ միայն արտադրանքի աճման,
վոր տալիս է պետական արդիւնաբերութիւնը,
աշխատանքի արտադրողականութիւնն բարձ-
րացման, այլ և ալդ արտադրանքի ինքնարժեքի
և նրա վորակի վրա:

Ներկայումս կուսակցութիւնը, տնտեսական
որդանները և արհմիութիւնները հատուկ ու-
շադրութիւն են նվիրում ինքնարժեքի իջեցման
և արտադրանքի վորակի հարցերին, վորոնց
շուրջը համախմբւում են բանվորական լայն
մասաները:

Արդիւնաբերական արտադրանքի ինքնար-
ժեքն իջեցնելու համար մղվող պայքարը վերջին
տարիներս հետևյալ արդիւնքներն է տվել:

1924/25 թ.	1923/24 թ.	համեմատությամբ իջեցում—	13,50/0
1925/26 թ.	1924/25 »	»	բարձրացում—0,7 »
1926/27 թ.	1925/26 »	»	իջեցում— 2,3 »
1927/28 թ.	1926/27 »	»	» 2,0 »
1928/29 թ.	1927/28 »	»	» 5,0 »

1929/30 թ.՝ 1928/29 թ. համեմատութիամբ,
11⁰/₀ իջեցում է նախագծված: Հնգամյա պլա-
նում արտադրանքի ինքնարժեքի իջեցումը հընդ-
ամյակի վերջին 35⁰/₀ է նախագծված: Առաջ
բերված ցւեցանիշներինց յերևում է, վոր ինքն-
արժեքի իջեցման համար մղվող պայքարը յեր-
կարատև, համառ պայքար է և շատ տարիներ
կտևի: «Ինքնարժեքի իջեցումը արդյունաբերու-
թյան կենտրոնական խնդիր է հանդիսանում և
այդ խնդրի լուծմանը պետք է յենթարկվեն մյուս
բոլոր խնդիրները», - կուսակցության XV համա-
գումարն այդ խոսքերով է ընդգծում ինքնար-
ժեքի իջեցման նշանակութունը:

Բայց ինչո՞ւ այդ խնդրին այդքան մեծ ու-
շադրություն է նվիրվում:

Ներկայումս արդյունաբերական ապրանքնե-
րի գներն զգալի չափով բարձր են մինչպատե-
րազմյան գներինց, միջին հաշվով գրեթե յերկու
անգամ ավելի: Այդպիսի դրությունն աննորմալ
է: Յեթե կապիտալիստական տնտեսության պայ-
մաններում գները տարբերայնորեն են փոփոխ-
վում պահանջի և առաջարկության կապակցու-
թյամբ, սաստիկ ուղճանում են ապրանքային
սովի ժամանակ և ընկնում՝ այն մոմենտներում,
յերբ ապրանքների առաջարկությունը շատ է և
պահանջը սակավ, - մեր պլանային տնտեսու-

թիւն սխտեմում համապատասխան որդանները
գները կանոնավորում են առաջին հերթին հո-
գուտ ժողովրդական տնտեսութիւն սոցիալիս-
տական սեկտորի զարգացման և ապա՝ հոգուտ
աշխատավորական լայն մասսաների: Հնգամյա
պլանում խնդիր և գրված սխտեմատիկորեն
իջեցնել արդյունաբերական ապրանքների գները
և 1932/33 թ. վերջին հասցնել 25⁰/₀-ից վոչ պա-
կասի:

Այստեղ պետք է ընդգծել, վոր արդյունա-
բերական ապրանքների գների 25⁰/₀ ով իջեցումը
կարելի չէ կատարել այն պայմանով, վոր ինքն-
արժեքն էլ իջնի 35⁰/₀-ով:

Այսպես ուրեմն, արդյունաբերական արտա-
դրանքի ինֆլարմենտ իջեցնելիս՝ արտադրական
ապրանքների գներն էլ կիջնեն: Այստեղից
բղխում է, նախ՝ բանվոր դասակարգի բարեկե-
ցութիւնն աճումը, կամ՝ ուրիշ խոսքով ասած,
բանվորի աշխատավարձի ուեալ մակարդակի
բարձրացումը, վորովհետև դրամի նույն քանա-
կով նա կարող է ավելի արտադրական ապրանք-
ներ գնել — հագուստ, կոշիկեղեն, տնային իրեր
և այլն, չերկրորդ՝ արտադրական ապրանքների
գների իջեցումը նպաստում է բանվոր դասա-
կարգի և աշխատավոր գյուղացիութիւնն գաշին-
քի ամրացմանը, վորովհետև աշխատավոր գյու-

դացին հաճախ խորհրդային իշխանութւան վե-
րաբերմունքը դեպի ինքը գնահատում ե այն
կապակցութեամբ, թե պետորգաններն ինչ գնե-
րով են գնում իրենից գյուղատնտեսական արտա-
դրանքը և ինչ գներով են ծախում իրեն ար-
դյունաբերական ապրանքներ, որինակ՝ գյուղա-
տնտեսական մեքենաներ, պարարտանյութեր,
կտորեղեն և այլն:

Մինչև այժմ մենք դեռ արդյունաբերական
ապրանքների և գյուղատնտեսական ապրանքնե-
րի գների հեռացում կամ՝ ինչպես ասում են,
«մկրատ» ունենք՝ նրանց մինչպատերազմյան
փոխհարաբերութւան համեմատութեամբ: Այդ
գներն իրար մոտեցնելու յերկու ճանապարհ
կա: Առաջին՝ բարձրացնել գյուղատնտեսական
ապրանքների գները: Յերկրորդ՝ իջեցնել ար-
դյունաբերական ապրանքների գները: Յեթե ա-
ռաջին ճանապարհն ընտրենք, այդ՝ միաժամա
հակ նշանակում ե, թե իջեցնում ենք բանվորի
աշխատավարձի ռեալ մակարդակը, վորի բյուջե-
յում գյուղատնտեսական մթերքները խոշոր տեղ
են բռնում, 35 40%: Յեթե գյուղատնտեսա-
կան մթերքների բարձրացրած գների փոխարեն
բանվորի դրամական աշխատավարձն ել բարձ-
րացնենք, այդ դեպքում պետք ե բարձրանա
ուրեմն և արդյունաբերական արտադրանքի ինքն-

արժեքը, իսկ այստեղից ել անխուսափելիորեն պետք է բղխեր նաև արտադրական ապրանքների գների բարձրացումը: Գյուղացիութիւնն մեջ դրամի առատութիւնն ավելացումը՝ իր հերթին, պետք է առաջ բերեր արտադրական ապրանքների պահանջի մեծացում, վորն ել ավելի պետք է սրեր գոյութիւնն ունեցող ապրանքալին սովը, վորի հետևանքը կլիներ նորից բարձրացնել արտադրական ապրանքների գներն այնտեղ, վորտեղ հատավաճառ առևտրի մեջ մասնավոր առևտրականը դեռ կարող է ազդեցութիւնն գործել: Գյուղատնտեսական գների նման բարձրացումից շահ չեղին ունենա վնչ բանվորները և վոչ ել աշխատավոր գյուղացիութիւնը, բացի գյուղացիութիւնն ավելի ունևոր և կուլակային մասից, վորովհետև գյուղացիութիւնն այդ խավերն իրենց հացի մեծ մասը շուկայումն են վաճառում: Իսկ աշխատավոր գյուղացիութիւնը, մանավանդ ամենաչքավոր մասը, հաճախ ինքն է ստիպված լինում հացը և գյուղատնտեսական ուրիշ մթերքներ շուկայումը ձեռք բերել, վորովհետև իր արտադրանքն իրեն չի բավականացնում:

Յերկրորդ ճանապարհը արտադրական ապրանքների գներն իջեցնելու և նրանց գյուղատնտեսական գներին մոտեցնելու ճանապարհն է, վորը համապատասխանում է թե բանվոր

դասակարգի և թե՛ աշխատավոր գյուղացիութիւնն
շահերին: Կուսակցութիւնն այս ճանապարհով
ե ուղղում արմիութիւնների և տնտեսական
որգանների աշխատանքը:

Ինչպես տեսնում ենք՝ ինքնարժեքի իջեցու-
մը բարձրացնում ե բանվոր դասակարգի յետ
աւխաստան գյուղացիութեան բարեկեցութիւնը
յետ նպաստում ե նրանց դաւիթի ամրացմանը:

Ինքնարժեքի իջեցումը հնարավորութիւն
ե տալիս մեծացնելու արդյունաբերութիւնն ներ-
քին կուտակումը:

Կապիտալիստներն իրենց արդյունաբերու-
թիւնն ստեղծում ելին գաղութների կամ ուրիշ
յերկրների կողոպուտի հաշվին կամ բանվորնե-
րին չափազանցորեն շահագործելու հաշվին,
մինչդեռ խորհրդային իշխանութիւնն այդ ուղի-
ներով չգնաց և, իհարկե, չի գնա: Կապիտա-
լիստներն իրենց արդյունաբերութիւնն ստեղծե-
լիս՝ իրենց տրամադրութեան տակ ունեյին նաև
ոտարերկրյա ահագին փոխառութիւններ, վորը
մերժում են մեզ տալ մեր դասակարգային թըշ-
նամիները: Ուստի մենք պետք ե առանձին ու-
շադրութիւն դարձնենք այն միջոցների վրա,
վորոնք մեր յերկրի ներսումն են գտնվում, և
առաջին հերթին, կուտակումների վրա՝ արտա-
դրութեան մեջ, վորոնք մեծ քանակութեամբ

Ֆարքիկաներ և գործարաններ կառուցելու հնարավորութիւնն կընձեռեն մեզ, իսկ ալդ բանը կ'ապահասեցնի գործազրկութիւնը:

Յեթե 1929/30 թ. արդիւնաբերութիւնն ինքնարժեքն իջեցնի $11\frac{0}{10}$ -ով, ահագին միջոցների խնայողութիւնն կլինի— 1 միլիարդ 320 միլիոն ռուբլի: Պետք է հիշել, վոր ինքնարժեքի ամեն մի տոկոսի իջեցումը կտա մոտ 120 միլիոն ռուբլի: Յուրաքանչիւր տարի արդիւնաբերութիւնն անգուտ արտադրանքի մեծացումով մեծանում է ինքնարժեքի իջեցման ամեն մի տոկոսի նշանակութիւնը: Այդպիսի ահագին խնայողութիւնը պետք է ստիպի յուրաքանչիւր դիտակից բանվորի առանձին ուշադրութիւնը վերաբերվելու ինքնարժեքի իջեցման խնդրին: Ինքնարժեքի իջեցումը հնարավորութիւն կտա մեծացնելու արդյունաբերութեան ներքին կուտակումները՝ նոր Ֆարքիկաներ յեղ գործարհներ կառուցելու համար յեղ կոգնի՝ յերկրի ինդուստրիայումն արագ թափով վարելու կանխաւեւած խնդրին, մեծացնելու գրաղված բանվորների թիվը յեղ պակասեցնելու գործազրկութիւնը:

Ինքնարժեքն իջեցնելիս անհրաժեշտ է ինկատի ունենալ արտասահմանյան արդիւնաբերական ապրանքների ինքնարժեքը: Պորհրդային արդիւնաբերութեան առջև ծառայած հիմ-

նական խնդրում – հասնել արդյունաբերական-
կապիտալիստական առաջնակարգ լերկրներին և
անցնել նշանցից թե տեխնիկայով և թե արտա-
դրանքի ծավալով, – հասկացվում է, թե արտա-
դրանքի ինքնարժեքը՝ համապատասխան վորա-
կովը միասին, պետք է ավելի ցածր լինի, քան
կապիտալիստական լավագույն ձեռնարկութուն-
ներում: Ներկայումս մեր ինքնարժեքը Ամերի-
կայի և Գերմանիայի ինքնարժեքից լերկու, յե-
րեք անգամ բարձր է:

Մենք՝ շնորհիվ մեր ժողովրդական տնտե-
սության և առաջին հերթին մեր արդյունաբե-
րության պլանային սկզբունքի, հսկայական ա-
ռավելութուն ունենք՝ կապիտալիստական պե-
տութւնների հանդեպ, ավելի եժան և ավելի
լավ արտադրելու մինչդեռ կապիտալիստական
պետութւնների մեջ ինքնարժեքի իջեցումը
կատարվում է առանձին ձեռնարկութւնների –
տրեստների, սինդիկատների և այլն փոխադարձ,
դաժան մրցման միջոցով՝ վորն ամբողջ լերկրի
տնտեսութւնը հսկայական վնաս է բերում:
Մեր առավելութւնը – պլանային սկզբունքը –
մենք ամբողջովին պետք է ողտագործենք ինքն-
արժեքի իջեցման համար:

Ինքնարժեքի իջեցումը մեզ հնարավորու-
թւն կտա մեծացնելու մեր պատրաստի գործ-

վածքների արտածումն արտասահման, վորն ավելի ձեռնառու չե, քան հումքի և կիսաֆարրիկատների արտածումը, վոր մեր արտածման մեծ մասն և կազմում, կնպաստի մեր արդյունաբերութիան զարգացմանը, կպահանջի գբադված լանվորների նոր կադրեր:

II

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԻՋԵՑՆԵԼ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ

Ձեռնարկութիան մեջ ինքնարժեքի իջեցում կարելի չե անել ծախսերի ամեն մի հատվածի հսշվին, վոր մտնում և՛ այսպես կոչված ֆարրիկ-գործարանային ինքնարժեքի մեջ, այսինքն՝ հումքի, նյութեղեղների, վառելիքի, աշխատավարձի, բարդումների և բանուժի համար արվող վերադի, ծախսերի, ամորտիզացիայի—մաշված գույքի նորոգութիւուն և սարքավորումներ— և այլ ցեխային և ֆարրիկ-գործարանային ծախսերի: Ինքնարժեքի մեջ հասկացվում են և այն ծախսերը, վոր արել և ձեռնարկութիւունը զանազան աղբյուրների վրա, վորպեսզի նրանց մշակած արտադրանքն ստանա:

Սիսեմատիկաբար նեանտկալից չափով ինֆնարժեքի իջեցման հասնելու համար՝ տնհրածեց և արտադրութիւան սոցիալիսական ուսցիո-

նալազուան, վերականուցման ուղին ընտել, ընդ սմին ուշադրության կենտրոն պետք է դարձնել գործող ձեռնարկությունների տնտեսական նպատակահարմար ոգտագործումը, տեխնիկայի վերջին խոսքի համաձայն կառուցումը, գիտության և գիտական տեխնիկայի դերի բարձրացումը ձեռնարկությունների աշխատանքում, նորագույն նվաճումների և գյուտերի ոգտագործումը, բանվորական ուժի կանոնավոր ոգտագործումը և սանիտարական-առողջապահական և տեխնիկական ձեռնարկումների բարելավումը, այսինքն՝ այն պայմանների բարելավումը, վորոնց մեջն է կատարվում ամեն մի բանվորի աշխատանքը:

Քննելով ինքնարժեքի վրա ազդող առանձին գործոնները (Ֆակտորները); պետք է նշել, վոր սարքավորման կանոնավոր, նպատակահարմար ոգտագործումը, հումքի, կիսաֆաբրիկատների ժամանակին մատակարարումը ձեռնարկություններին՝ մեծ նշանակություն ունի, վորովհետև տեխնիկական անկանոնությունների և կանգառումների հետևանքով մեր արդյունաբերությունը մեծ վնասներ է կրում, վորոնք բարձրացնում են նրա դուրս տալիք արտադրանքի ինքնարժեքը: Որինակ՝ 1927—28 թ. Լենինգրադի 26 տրեստ մոտավորապես 5 միլիոն ժամվա

կանգառումներ են ունեցել, վորի համար բան-
վորներին վճարվել է 2 միլիոն 350 հազար ուր-
լի: Միբիբի տեղական արդյունաբերութլունը
նույն պատճառով մեկ տարում 4 միլիոն ուր-
լու կորուստ է ունեցել: Այդ անկանոնութլուն-
ների և կանգառումների առավելագույն կարճու-
մը հնարավորութլուն կտա իջեցնելու ինքնար-
ժեքը:

Ինքնարժեքի վճռական իջեցման հետևյալ
ամենակարևոր աղբյուրը կարող է լինել հումքի,
կիսաֆարրիկատների, վառելիքի և ոժանդակ
նյութերի գործածութլան կրճատումը: Որինակ,
կարուձևի արդյունաբերութլան մեջ՝ ձևի ռացիո-
նալացման շնորհիվ, 10⁰/₀-ի չափով նյութեղենի
տնտեսում ձեռք բերվեց, վորն իր հերթին
ծախսերը 20 միլիոն ուրլով կրճատեց:

Ներկայումս մեր արդյունաբերութլունը հում-
քի և կիսաֆարրիկատների մի քանի տեսակների
պակասութլուն է զգում: Այդ պատճառով ձեռ-
նարկութլուններն ստիպված են կրճատել աշ-
խատանքների ծրագիրը, վորի հետևանքով՝ վոր
ներանց վոչ լրիվ բեռնվածութլան արդյունքն է,
բարձրանում է ինքնարժեքը, Հումքի գործա-
դրութլան տնտեսումը հնարավորութլուն կտա
վոչ միայն ինքնարժեքն իջեցնել, այլ և կմեծաց-
նի ապրանքային արտադրանքի քանակը, այս-

ինքն կնպաստի դուրս մղելու ապրանքային սովյալ
Բացի դրանից, կան ձեռնարկություններ, վորոնք
արտասահմանյան հումքով և կիսաֆաբրիկատ-
ներով են աշխատում, վորոնց խնամուտ ծախ-
սումը նարավորություն կտա հումքի փոխարեն
եւ ավելի մեծ քանակությամբ սարքավորումներ
մուծել մեր գործարանների և ֆաբրիկաների
համար, վորը՝ իրհերթին, կնպաստի ինքնարժե-
քի իջեցմանը:

Հաճախ ձեռնարկությունները բավարար ու-
շադրություն չեն նվիրում բրակի հարցերին,
մինչդեռ այդ հանգամանքը գորեղ կերպով ազ-
դում է ինքնարժեքի թանգացման վրա: Որինակ՝
«Ռուսկիլ դիզել» գործարանում բրակը շարժիչի
ինքնարժեքը թանգացնում է 14, 5⁰/₀-ով:

«Կրասնիյ Պուտիլովեցում» շուգունա-ձուլական
ցեխում բրակը մեկ տարվա ընթացքում տատան-
վում է՝ միջին հաշվով 35-40⁰/₀: Ամբողջ գործա-
րանում 1927/28 թ. բրակն ամբողջ կատարված
գործի 4⁰/₀ եր կազմում, 1 միլիոն 500 հազար
ռուբլու վնաս բերելով:

Միայն չիթ գեղազարդելու ֆաբրիկայում
1926/27 թվականին կատարված ընդհանուր գոր-
ծի 4⁰/₀ բրակը 1927/28 թ. բարձրացել է մին-
չև 5,8⁰/₀, վորը տարեկան 700 հազար ռուբլի
յե անում:

Բրակի իջեցման հարցերը պետք է հասուկ
սեղ գրավեն ինքնարժեքի իջեցման պայքարում:
Ինքնարժեքի իջեցման մեջ ամենակարեւոր
սեղն է թոնուս մայեվ բանվորական ուժի ռա-
ցիոնալ ոգսագործումը, վորի համար պահանջ-
վում է՝ առաջին հերթին, աշխատանքը տեխնի-
կապես կանոնավորել:

Յեթե մենք ցանկանում ենք, վոր ամեն մի
բանվոր իր նորմալ ինտենսիվ աշխատանքով ա-
ռավելագու՛նն արդյունք տա, պետք է ոգտագոր-
ծենք նրան իր գիտելիքներին, հմտութւան և ըն-
դունակութւուններին համապատասխան ձևով:
Անհրաժեշտ է աշխատանքի համար աջակիսի
սանիտարական· առողջապահական և տեխնիկա-
կան պայմաններ ստեղծել, վորոնք ոժանդակե-
լին բանվորի աշխատանքին և հպաստելին աշ-
խատանքի արտադրողականութւունը բարձրս ց-
նելուն:

Բանվորական ուժի վրա դրա դրվող ծախսերը և
նրա հետ կապված վերադիր ծախսերն արտա-
դրութւան մեջ մեծ տոկոս են կազմում: Աշխա-
տավարձի բաժինը Ֆաբրիկ-գործարանային ար-
տադրանքի ինքնարժեքում՝ միջին թվով կազմում
է մոտավորապես 25⁰/₀, ծանր արդյունաբերու-
թւան մեջ՝ մոտավորապես 40⁰/₀, թեթե արդյու-
նաբերութւան մեջ՝ 18-19⁰/₀: Արդյունաբերու-

Թիւան մի քանի ճյուղերում, ինչպես՝ որինակ, չերկաթահանքի արդյունաբերութիւն մեջ, նա 62⁰/₀-ի չե հասնում, քարածխալինի մեջ՝ 33.9⁰/₀, կիզահողալինի՝ (տորֆ) մեջ՝ 73,8⁰/₀։

Բանվորական ուժի ռացիոնալ ոգսագործումն՝ ինքնարժեքի իջեցման նկատմամբ, ամիջական արդյունքներ և սալիս յեվ սանում և դեպի աշխատավարձի բարձրացումը։

«Կրասնիյ Գվոզդիլլիկ» գործարանում մետաղալարի վրա աշխատող բանվորը մեկ թմբուկից չերկուսի անցնելիս՝ իր միջին աշխատավարձը բարձրացրեց, իսկ հետեւանքն աչն յեղավ, վոր ընկերական ուժի ինքնարժեքում 40⁰/₀ տնտեսումն չեղավ։ Նման որինակներ կարելի չե բերել նաև արդյունաբերութիւն ուրիշ ճյուղերից։

Ինքնարժեքն իջեցնելու պայքարու առանձնապես մեծ նշանակություն ունեն աշխատանքային դիսցիպլինայի բարձրացումը յեվ պայքարը պրոգուլների դեմ, վորոնցից արդյունաբերութիւնը միլիոնների վնաս է կրում։ Որինակ, Կոլոմնայի մեքենաշինարարական գործարանում վերջին չերկու տարում բանվորները պրոգուլների ժամերը 800 հազար բանվորական որ են կազմում, վորը գործարանին 1 միլիոն 500 հազար ռուբլու վնաս է տվել։


Վոչ հարգելի պատճառներով պրոգուլը տնտես-

սական վերջին տարում ամբողջ արդյունաբե-
րութիան մեջ 13 միլիոն բանվորական ուր ե կադ-
մում, վորի հետևանքով արտադրանքի խոշոր
թերակատարում ե ստացվել և արդյունաբերու-
թյունը տասնյակ միլիոնների վնաս ե կրել: Խո-
շոր ծախսեր ե անում ձեռնարկութունը վոչ
միայն պրոդուկտների պատճառով, այլ և աշխա-
տանքային դիսցիպլինայի անկման այլ տե-
սակների պատճառով, ինչպիսիք են՝ աշխատան-
քից վաղաժամ հեռանալը, աշխատանքից ուշա-
ցումը, վարչութիան կարգադրութուններն իր
ժամանակին չկատարելը, անփութ վերաբեր-
մունքը գույքին և այլն:

Որինակ՝ Շախտիի շրջանում առաջադրութունը
չկատարելու պատճառով, վորը մեծ մասով հե-
տևանք ե լեզել աշխատանքային դիսցիպլինայի
անկման, Շախտիի հանքավարչութունը վնաս ե
կրել 600 հազար ուրբի, այդ պատճառով ել
անարացիտի ինքնարժեքը 11⁰/₀-ով բարձրացել ե:

1927/28 թվականին Դոնածուխի բանվորների
վրա 476 հազար տուժ ե դրվել, ամեն մի բան
վորին տարեկան ընկնում ե 2,4 տուժ: Տու-
ժերի մեծ տոկոսը (51 հազար դեպք) գույքի
փչացմանն ե ընկնում:

Բանվորական ուժի ավելցուկն ել ծանր բեռ
ե դառնում արտադրանքի ինքնարժեքի համար:



Որինակ՝ Ուրալում, Նադեժդինայի գործարանում բանվորական ուժի ավելցուկը 1926/27 թվականին հասել է 1500 մարդու, Լիսվենի մետաղագործական գործարանում՝ 500 մարդու, Կոլչուզինի գործարանում 489 մարդու, վորոնց պահպանության ծախսն ամսական 42 հազար ռուբլույն հասել է:

Բանվորական լայն մասսաները ինֆլուորմենի իջեցման համար պայքար մղելիս, պեժե ե վրնուական խնդիր դնեն պակասեցնելու բանվորական ուժի ծախսերը արտադրանքի ինֆլուորմենի մեջ, պրոգուզները պակասեցնելու, աշխատանքային դիսցիպլինան բարձրացնելու, ձեռնարկություններում բանվորական ուժը կանոնավորապես ոգտագործելու ճանապարհով:

Չափազանց ելական մոմենտ ե հանդիսանում նաև արտադրական շրջանառության արագությունը ձեռնարկության ներսում: Հումքից վերամշակված արտադրանք պատրաստելն ավելի կարճ ժամկետներով ձեռնարկությանը մեծ ոգուտներ ե տալիս: Այսպես, որինակ՝ «Սկորոխոդ» ֆաբրիկայում թելակար կոշկեղենի արտադրությունը՝ ռացիոնալացման շնորհիվ, 20 որը 5 որվա հասցնելու կրճատումով, ապատեց շրջանառական միջոցների 157,500 ռուբլին: Ձեռնարկությունն այդ գումարով կկարողանար պակա-

մեջնել փոխառութիւն միջոցները, դրանով ել՝ նաև տոկոսները վճարելու ծախսերը: Կապիտալի շրջանառումը մեծացավ 4 անգամ: Զեռնարկութիւնն ավելի շատ արտադրանք դուրս տրվեց և մեծ վաստակ ստացավ:

Ինքնարժեքի իջեցումը կարող է և պետք է կատարվի ցեխալին և համագործարանական վերադիր ծախսերի առավելագուէն նվազեցումով, վորոնց տեսակարար կշիռը արտադրանքի ինքնարժեքի $8 - 9\%$ է կազմում:

Վերադիր ծախսերի ընդհանուր գումարը, վոր նախագծված է 1927/28 թ. արդյունաբերութիւն մեջ, հավասար է 319 միլիոն ռուբլու: Այդ ծախսերի 10% իջեցումը կանտեսեր 30 միլիոն ռուբլի:

Յեւ այսպես, մենք տեսնում ենք, վոր ամեն մի առանձին ձեռնարկութիւն մեջ հնարավոր է ինքնարժեքի իջեցումը ծախսերի զանազան հոգվածներում և՛ առաջին հերթին, մեր արդյունաբերութիւն ռացիոնալացման և վերահառուցման հաշվին և վոր հանրագումարում նա մեր ամբողջ արդյունաբերութիւնը կտա հարյուրավոր միլիոն ռուբլիներ ի տնտեսում:

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՆՑ
ՑՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՉ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆԸ

Մեր սոցիալիստական ռացիոնալացմանը զուգընթաց ե գնում բանվոր դասակարգի նյութական բարեկեցութեան աճումը: Ամբողջ արդյունաբերութեան մեջ ռեալ աշխատավարձը՝ միջին հաշվով 1927/28 թ. հասավ 127⁰/₀՝ մինչպատերազմյանի համեմատութեամբ: Հնգամյա պլանում իրական աշխատավարձի աճումը՝ միջին հաշվով, նախագծված ե դարձյալ 71⁰/₀:

Այդ նշանակում ե, թե աշխատավարձի ռեալ մակարդակը հնգամյակի վերջում կլինի միջին հաշվով բոլոր բանվորների համար 2-ից ավելի անգամ շատ՝ մինչպատերազմյանի համեմատութեամբ:

Ամբողջ բանվոր դասակարգի լեկամտի բաժինը ամբողջ ժողովրդական լեկամտի համեմատութեամբ, 1932/33 թվականի վերջին 32,1⁰/₀-ից կհասնի 37⁰/₀-ի:

Զբաղված բանվորների քանակը տարեցտարի մեծանում ե: Հնգամյակում արդյունաբերութեան մեջ 750 հազար նոր բանվոր պետք ե ներգրավվի: Հնգամյակի վերջին ամբողջ արդյունաբերութունը 7 ժամյա բանվորական օրվան կանցնի:

Այդպես էլ բարենպաստ են հնգամյակի ցույցանիշները բնակարանային և կենցաղային պայմանների բարելավման, աշխատանքի պաշտպանութիան հատկացումներն ուժեղացնելու տեսակետից և այլն:

Ինչպես տեսնում ենք, մեր սոցիալիստական ռացիոնալացումը բարձրացնում է բանվորի նյութակազմ, կուլտուրական մակարդակը, բարելավում է նրա աշխատանքի պայմանները յե՛վ մեծացնում է արդյունաբերության մեջն զբաղված բանվորների քանակը:

Կապիտալիստական ռացիոնալացումն էլ՝ իհարկե, նույնպես ձգտում է ոգտագործել գիտութիան և տեխնիկայի բոլոր նվաճումները, սակայն ծանրութիան կենտրոնը նա փոխադրում է աշխատանքի ինտենսիվութիան բարձրացման վրա: Հետևանքն այն է լինում, վոր բանվորի համար աշխատանքի պայմանները վատթարանում են, նրա կենսական մակարդակն իջնում է, գործազրկութիւունը շատանում է, որգանիզմն արագորեն հյուժվում և խեղանդամ է դառնում, այսինքն՝ բանվորները մատուցորեն հաշմանդամ են դառնում:

Գերմանիայում՝ որինակ, ածխարդյունաբերութիան մեջ (Ռուր) բանվորի աշխատանքի արտադրողականութիւունը 1913 թվականից սկսած

մինչև 1927 թվականը ներառյալ, բարձրացավ 32⁰/₀-ով. իսկ աշխատավարձը 1926 թվականից սկսած մինչև 1927 թ. հունիսն աճեց 8,6⁰/₀-ով: Նույն ժամանակաշրջանում կյանքը թանգացավ 10⁰/₀-ով: Հետևաբար ռեալաշխատավարձն իջավ: Յեթե Գերմանիայի վորակյալ բանվորի մինչպատերազմյան աշխատավարձի մակարդակը 100 ընդունենք, 1927 թվին նա հավասար եր 93-ի, այսինքն ռեալ աշխատավարձն իջել եր 7⁰/₀ ու: 1913 թվականին արհմիության գործազուրկ անդամների թիվը միջին հաշվով 2,9⁰/₀ եր, 1927 թվականին՝ 12,3⁰/₀:

Աշխատանքի պայմանների վատթարացումը՝ կապիտալիստական ռացիոնալացման կապակցությամբ, առաջ ե բերում ջարդվածքի և հիվանդուլթյունների աճում: Գերմանական վիճակագրական տվյալների համաձայն 1913 թվականին ամեն մի բանվոր՝ միջին հաշվով, հիվանդուլթյան պատճառով բաց եր թողնում 9,3 բանվորական որ, իսկ 1927 թվականին՝ ռացիոնալացումից հետո՝ 26,8 բանվորական որ. հիվանդուլթյան դեպքերը՝ մինչպատերազմյանի համեմատությամբ, շատացան գրեթե չերեք անգամ:

Գերմանիայում, բազմաթիվ արտադրուլթյունների մեջ բանվորական որը հասավ տաս ժամվա:

Նման տվյալներ կան նաև կապիտալիստա-
կան մյուս չեղրներին վերաբերութիւամբ. նրանք
հաստատում են այն դրութիւնը, թե կապիտա-
լիստական ռացիոնալացումը կատարվում է ա-
ռաջին հերթին ի հաշիվ բանվոր դասակարգի:

IV

ԻՆՔՆԱՐՃԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՆԸՆԴՅԱՏ ԱՐՏԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին ժամանակներս ինքնարժեքի իջեց-
ման մի նոր աղբյուր հանդիսացավ արտադրա-
կան անընդհատ շաբաթի գործադրութիւնը:

Անհրաժեշտ է միանգամից նշել, թե արտա-
դրական անընդհատ շաբաթվա գործադրութիւամբ
բանվորների շահերը չեն տուժում: Այդ չեղում
է հրատարակված որենքներից, վորոնցով բան-
վորներն ապահովվում են տարվա մեջ նույնքա-
նակ ազատ որերով, վոր նրանք ունեցին մինչև
անընդհատ արտադրութիւն գործադրութիւնը:
Տարվա 365 որերից 65 տոնական որեր ելին և
բանվորներն արդյունաբերական ձեռնարկու-
թիւնների մեծ մասում միաժամանակ ելին ոգտ-
վում հանգստի այդ որերից: Այժմ այդ տոնա-
կան որերին բանվորների համար փոխարինում

են հերթական արձակուրդի որերը տարբեր ժամանակներով, այն նկատառումով, վոր ձեռնարկությունը կանգ չառնի, այլ նորմալ ձևով անընդհատ կատարի իր աշխատանքը: Տարվա մեջ միայն 5 հեղափոխական որեր են (1 որ 1905 թ. հունվարի 9 հիշատակին և ընկեր Լենինի հիշատակին, 2 որ՝ մայիսի 1 և 2 Ինտերնացիոնալի որերն են, 2 որ՝ նոյեմբերի 7 և 8 - Հոկտեմբերյան տարեդարձի որեր) գառվում, վորպես բոլոր բանվորների համար միաժամանակ տոնելի որեր, բացառությամբ՝ իհարկե, այն ձեռնարկությունների, վորոնք մինչև այժմ ել անընդհատ աշխատանք ելին կատարում (փոխադրություն, ելեկտրոկայան, հալոցներ):

Արտադրական անընդհատ շարքով աւանտուսն ի՞նչ է սալիս:

Նախ՝ արտադրական անընդհատ շարքով աւանտումով ամբողջ արդյունաբերության մեջ արտադրանքի քանակը յենթադրաբար կմեծանա 20⁰/₀-ով:

Յերկրոյդ՝ բացի արտադրանքի մեծանալուց, ժողովրդական տնտեսությունը մի շարք ուրիշ ոգուտներ կունենա, այսինքն՝ ոգուտ հավելյալ արտադրանքից, կողմնակի հարկերից, կապիտալ ներդրումների տնտեսումից, վոր պեսք եր դնել արդյունաբերության մեջ այդ քանակով արտադրանք կատարելու համար և այլն:

Արտադրական անընդհատ շաբաթվա կիրառումից՝ ըստ հաշվառման ընկ. Յու. Լարինի, վորը նախաձեռնողն է անընդհատ շաբաթվա գործադրութւան, պետութւան ոգուան առաջին հնգամյակի մնացած 4 տարվա ընթացքում կհասնի 4 միլիարդ ուրբու:

Սորհրդային պետութւունն այդ միջոցների մի մասը կկարողանա հատկացնել բանվորներին նյութական դրութւան բարելավմանը և նրանց կուլտուր-կենցաղային սպասարկութւանը:

Իացի դրանից, արդւունաբերութւան արտադրական անընդհատ շաբաթվա գործադրութւամբ 4 տարվա ընթացքում 500 հազարից ավելի նոր բանվորի կարիք կզգացվի, վորով նշանակալից չափով գործազրկութւունը կմեղմանա:

Իսկ ինչպե՞ս կանդրադարձնա արտադրական անընդհատ շաբաթվա կիրառումը ինքնարժեքի իջեցման վրա:

Այժմ դժվար է դեռևս ընդհանուր հաշվառում կատարել, սակայն կասկած չկա, վոր արտադրական անընդհատ շաբաթվա կիրառման միջոցով ել ինքնարժեքի իջեցում ձեռք կբերվի: Յեթե աջողվի թեկուզ միայն մեկ տոկոս իջեցում ստանալ, 1928 - 29 թվականին այդ իջեցումը մոտ 120 միլիոն ուրբի կտա, իսկ հնգամյակի վերջին տարում - 1932 - 33 թ. - անգուտ

արտադրանքի մեծանալու հետևանքով կտա մոտավորապես 250 միլիոն ռուբլի. սակայն արդյունաբերութեան վորոշ ճյուղեր նախատեսուած են, թե ինքնարժեքը 1⁰/₀-ից եւ ավելի կլինի շնորհիվ արտադրական անընդհատ շաբաթվա կիրարկման: Այսպես, որինակ, տեքստիլ արդյունաբերութեան մեջ լենթադրվում է իջեցնել մինչև 6⁰/₀:

Արտադրական անընդհատ շաբաթվա կիրարկումը հնարավորություն կընձեռի արդյունաբերության դուրս սալի արտադրանքի ֆանակըն ավելացնելու, ինքնարժեքն իջեցնելու յեվ բանվոր դասակարգի նյութական յեվ կուլտուրկենցադային դրությունը բարձրացնելու:

V

ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

Արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարում վոշ պակաս ուշադրութուն պետք է դարձնել արտադրանքի վորակի վրա: Զեռնարկութուններից վոմանքնվաղագույն դիմադրութեան ուղին են բռնում՝ ինքնարժեքն իջեցնելով վորակի վատթարացման հաշվին:

Այն ձեռնարկությունները, վորոնք պատ-

բասի ճարբիկասներ են սեակուս, դուրս սալի մթերքների վորակը վասացնելով, շաս դեպքերում վասբարացնում են աշխասավորների նյութական դրությունը: *Բանվորը կամ գլուզացին, վոր մի իր և գնել և այդ իրը համապատասխան վորակ ունենալու դեպքում նրան պետք և վորոշ ժամանակ ծառայեր, վատորակ լինելու դեպքում ավելի կարճ ժամանակ կծառայի և հետևաբար, բանվորն ստիպված կլինի լրացուցիչ ծախսեր անելու:*

Նույն ձեռնարկությունները, վորոնց դուրս սված արտադրանքն ուրիշ ձեռնարկությունների համար վորպես հումք կամ կիսաճարբիկաս և ծառայելու, իրենց վասնցրած արտադրանքով վոյ սիայն իջեցնում են պատասխի մթերքի վորակը, այլ յեվ շաս դեպքերում բարձրացնում են նրա ինքնարժեքը: *Վատթարացած հումքը և կիսաթարբիկասը շատ չերկար ժամանակ և մեծ ծախքեր են պահանջում մշակման, տեսակավորման համար, բրակի տոկոսն են մեծացնում և այլն:*

Մի այսպիսի որինակ վերցնենք: Արդյունաբերության բազմաթիվ ճյուղերում մետաղի վորակը մեծ նշանակություն ունի արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու տեսակետից: Մինչդեռ ֆուզոստայլ խոշորագույն արեստի մետաղի գոր-

ծարանները դուրս տալիք արտադրանքի վորակի վերաբերութիամբ թուլացրին իրենց ուշադրութիւնը: Վորակի վատացման հետևանքով՝ որինակ, գերանների վորակի, Ազնեվթում և մի քանի ուրիշ գործարաններում փլուզումի մի քանի դեպքեր են պատահել:

Տեսակավոր մետաղը բաց ե թողնվում մարկաներին անհամապատասխան ձևով, անկանոն պրոֆիլներով, ծալրերի անհավասար հաստութիամբ և այլն:

Այս ամենն այդպիսի արտադրանք ձեռք բերած ձեռնարկութիւններից լրացուցիչ ծախսեր են պահանջում նյութը մշակելու համար, համապատասխան այն հաշիվներին և պահանջներին, վորոնցից յեւնում ե ձեռնարկութիւնը:

Վերջին ժամանակներս առանձնապես հաճախակի դարձան բողոքների դեպքերը չուզուների վատորակ ձուլման և պատրաստի վատորակ մետաղեղենի դեմ: Զուլվածք բաց թողնող ձեռնարկութիւններն ել՝ իրենց հերթին, բողոքում են վատորակ կոկսի դեմ, վորը չուզուների մեջ ծծմբի գլխավոր աղբյուրն ե: Այն վատ ձուլվածքը, վոր մեքենաների, խողովակների, ուսիների և նման բաների արտադրութիւնն վրա յե գործադրվում, իր հերթին վատացնում ե պատրաստի ապրանքները: Պատրաստի ապրանքների վա-

տորակութիւնը՝ իհարկե, միայն հուճքի և կի-
սափարբիկատների վատ վորակից չի կախված,
այլև թե վարչութիւն և թե բանվորների անփութ
վերաբերմունքից՝ հանդեպ արտադրութիւն պրո-
ցեսի: Որինակ՝ Լենինի անվան ծովալին միա-
կտուր խողովակների զործարանում բրակը 50 ի
և ավելի տոկոսի չե հասնում: շատ դեպքերում
այդ բրակը աչքի չե ընկնում արտաքին պարզ
գննութիւն կատարելիս:

Տեքստիլ արդոււնաբերութիւն մեջ. վորտեղ
բամբակի անմաքրութիւն և շատ թացութիւն
հետևանքով ավելի թուլ և անհավասար մանած
ե ստացվում, նշանակալից չափով բարձրանում
և բրակի տոկոսը և շատանում են պատրաստի
արտադրանքի պակասութիւնները:

Այստեղ ել՝ ինչպես և ծանր արդոււնաբե-
րութիւն մեջ, վորակի վատացումը վոչ միայն
վատ հուճքի պատճառով ե առաջ գալիս, այլ և
անփութ վերաբերմունքի հետևանքով: Տեքստիլ
արտադրանքի վատորակութիւնը կարելի չե բնո-
ւոշել թեկուզ մի այսպիսի որինակով. ԲԳՏ հանձ-
նաժողովի գննած 348 թաշկինակներից և վոչ
մեկն անթերի զործվածք չուներ:

Շատ դեպքերում մեր արդոււնաբերութիւն
արտադրանքի վորակը հետ ե մնում մինչպատե-
րադմյանից: Վերցնենք՝ որինակ, կրկնակոշիկնե-

ըր: Գլավքիմն ընդունում ե, վոր այդ կրկնակոշիկնե-
րի այժմյան վորակը մինչպատերազմյանի համեմա-
տությամբ 70⁰/₀-ից բարձր չե: Մինչդեռ խնդի-
րըն այն ե, վոր մեր սոցիալիստական արդյու-
նաբերությունը պետք ե վոչ միայն մինչպատե-
րազմյանից ավելի եժան և ավելի լավ կրկնակո-
շիկ արտադրի, այլ ավելի եժան և ավելի լավ
քան թե կապիտալիստական առաջնակարգ չեր
կրները:

Մենք մեր ընթերցողների ուշադրությունն
ավելի կենտրոնացնում ելինք վորակի վատաց-
ման այն փաստերի վրա, վորոնք վարչության և
բանվորների անփուլթ վերաբերմունքի հետևանք
են նրանց արտադրանքի հանդեպ: Սակայն պետք
ե առանձնապես շեշտել ձեռնարկություններից
վոմանց քաղաքականության անթուլլատրելիու-
թյունը, վորոնք ինքնարժեքն իջեցնում են վո-
րակի վատացման հաշվին, այսինքն՝ տնտեսման
նպատակներով ավելի եժան հոմք, կիսաֆարրի-
կատներ և ոժանդակ նյութեղեն են գործածում
կամ արտադրության պրոցեսում վորոշ գործառ-
նություններ են կրճատում և այլն:

Ամեն մի բանվորի համար պետք ե պարզ
լինի, վոր արտադրանքի վորակի վատացումը յերկ-
րի ինդուստրացման թափին արգելակ ե հանդի-
սանում և ոգտակար ծառայությունը կրճատելու

և մաշվածութիւնն արագացնելու հետեանքով՝
սալբանիքային սովն է սրում: Արտադրանքի վա-
ստակութիւնն իջեցնում է բանվորների ռեալ
սեխասավարձի մակարդակը:

VI

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Արհմիութիւնները՝ վորպես բանվոր դա-
սակարգի մասսայական կազմակերպութիւններ,
խորհրդային իշխանութեան նեցուկն են հանդի-
սանում: Բոլոր դժվարին և բարդ մոմենտներում
արհմիութիւնները՝ կոմունիստական կուսակցու-
թեան ղեկավարութեամբ, միշտ ակտիվ ոգնու-
թիւն են ցույց տվել նրան:

Քաղաքացիական պատերազմի, սովի ժամա-
նակ նրանք ռազմաճակատի համար, պարենի
մթերման համար վաշտեր ելին կազմակերպում,
մորիլիզացիայի ելին լենթարկում իրենց ան-
դամներին բժավոր տիֆի և համաճարակների
դեմ պայքարելու համար և ակտիվորեն աշխա-
տում ելին համաշխարհային և քաղաքացիական
պատերազմներով քայքայված արդյունաբերու-
թեան վերականգնման վրա:

Ուրիշ կերպ ել չեր կարող լինել, վորովհե-

տև խորհրդային իշխանությունը բանվոր դասակարգի իշխանությունն է և նրա բոլոր նվաճումներն ու դժվարություններն անմիջապես անդրադառնում են նրա վրա:

«Վորքան և մեծ եր մեր արհմիությունների դերը պրոլետարիատի իշխանության համար մղվող պայքարի և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջաններում, ներկա մոմենտում ել ավելի լայն է նրանց գործունեությունը դաշտը, ել ավելի կարևոր են նրանց առաջ ծառայած խնդիրները» — այսպես ընդգծեց արհմիությունների դերը սոցիալիստական շինարարության ծավալման մեջ ՀԱՄԿԿ(Բ) XIV համագումարը:

Ներկա մոմենտում Խորհրդային Միության առաջ հսկայական անխուսափելի դժվարություններ են ծառայել, վորոնք կապված են լերկրի ինդուստրացման արագ թափի հետ: Կոմունիստական կուսակցությունը՝ չնայելով իր մի վորոշ մասի, այսպես կոչված «աջ թեքման», տատանումներին, ամբողջապես և լրիվ կերպով ընդունեց տնտեսական զարգացման այդպիսի արագ թափի անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, վորը նվազագույն ժամկետում պետք է ուժեղացներ բանվոր դասակարգի դերը լերկրում, հնարավորություն պետք է տար կապիտալիստական առաջնակարգ լերկրներից

անցնել թե տեխնիկապես և թե նյութական հզորութիւններ և դրանով պետք է ամրապնդելը Սորհրդային Միութիւնն ուժը և պաշտպանունակութիւնը:

Այդ կապակցութիւններ սոցիալիստական արդյունաբերութիւնն առաջ ծառայցան նրա վերակառուցման և ռացիոնալացման խոշոր կարևորութիւնն ունեցող խնդիրները, եժանացման և՛ ամենից առաջ, արտադրանքի ինքնարժեքի եժանայման և աշխատանքի արտադրողականութիւնն բարձրացման խնդիրները, վորովհետև այդ բանն իր հերթին հնարավորութիւն կտա բարձրացնելու բանվորների նյութական, կուլտուրական մակարդակը:

Բանվոր դասակարգի ստորյա կարիքները պահեսպանող արհմիութիւնները պէտք է անխնայաբար մղեն ռացիոնալացման ամեն ճեսակի աղավաղումների դեմ, վորոնք վատթարացնում են աշխատանքի պայմանները, չափազանցորեն ճնշում են բանվորական ուժը, վոխանակ կազմակերպչական-տեխնիկական անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու: Արհմիութիւնները միաժամանակ ամեն ճեսակի աջակցութիւն պէտք է ցույց տան տնտեսականներին ինքնարժեքի հաճար մղվող պայքարում, վորովհետև արդյունաբերական բանվորները աշխատավարձի ռեալ մակար-

դակի բարձրացումը $71^0/0$ -ով 1932—33 թ. վերջին և բանվոր դասակարգի դրուժյան նյութական-կուլտուրական մյուս բարելավումներն ուղղակի կախումն ունեն արտադրանքի ինքնարժեքը $35^0/0$ իջեցնելուց և աշխատանքի արտադրողականութունը $110^0/0$ -ով մեծացնելուց:

Այս առաջադրույթունները կարող են կատարվել միայն բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին առավելագույն չափով աշխատանքի մեջ ներգրավելու ճանապարհով, վորոնց ստեղծագործութունը՝ ինքնարժեքի համար մղվող պայքարում, կարող է արտահայտվել և ձևակերպվել լավ կազմակերպված սոցիալիստական մրցակցության միջոցով՝ թե առանձին ֆաբրիկաների և գործարանների միջև և թե գործարանի ներսումը տարվող մրցակցումով առանձին ցեխերի, հերթափոխութունների, բրիգադների և նույնիսկ առանձին բանվորների միջև:

ՀԱՄԽ-ի II պլենումը, վոր տեղի ունեցավ 1929 թ., սոցիալիստական մրցակցության ծավալման մոմենտում, չերբ շատ դեպքերում արհմիութունները մեկուսացած ելին, սրեց արհմիութունների ուշադրութունն այդ շարժման վրա: «Անհրաժեշտ է սոցիալիստական մրցակցութունը դիտել վորպես արհմիութունների սմենակարևոր մի խնդիր: Ծավալվող սոցիալիս-

տական մրցակցութիւնը, վորը մասսաների հե-
ղափոխական նախաձեռնութիւնն ամենացատուն
արտահայտութիւնն և սոցիալիստական վերակա-
ռուցման ժամանակաշրջանում, պետք է ընդա-
ռաջ զնան միութենական կազմակերպութիւն-
ները լիակատար պատրաստականութիւամբ և ամեն տեսակի նախաձեռնութիւամբ»:

Սոցիալիստական մրցակցութիւնն մեջ մտնե-
լով, ֆարրիկաների և դործարանների բանվոր-
ները պայմանադրեր ելին կնքում և ալժմ ել
կնքում են այն ելական իմաստով, թե բանվոր-
ները խոստանում են՝ աշխատանքալին դիսցիպ-
լինալի ամբողջողումով, աշխատանքի արտադրո-
ղականութիւնն բարձրացումով, ամբողջ արտա-
դրութիւնն միջից թերութիւնները վերացնելու
ակտիվ մասնակցութիւամբ—արտադրանքի ինքն-
արժեքն իջեցնել: Միքանի շրջաններում առան-
ձին գործարանների բանվորները կոչ են անում
միմյանց իրենց արտադրանքի վորակը բարելա-
վելու: Ալսպես՝ սրինակ, Աշինի մետաղագործա-
բանի բանվորները պահանջ դրին Բակալ գործա-
բանի բանվորներին բարելավել հանքի վորակը:
Նույն Աշինի գործարանում քննութիւնն ելին առ-
նըվում Մինյարի գործարանի բողոքները մետա-
ղի վատորակութիւնն մասին: Միասի խարտոցի
գործարանը Զլատոուստ խարտոցի միացլալ գոր-

ծարաններին կոչ ե. անուամբ բարձրացնել խարտոցի պողպատը գլանելու վորակը և այլն: Սոցիալիստական մրցակցությունը՝ վորին մասնակցում են միջանի միլիոն արդյունաբերական և փոխադրող բանվորներ, այն արդյունքը տվեց, վոր մենք արդեն նշանակալից չափով նվաճումներ ենք ձեռք բերել ինքնարժեքի իջեցման բնագավառում: Թեպետև հանրացված տեղեկություններ դեռ չունենք, սակայն առանձին փաստերն ասում են, թե անհրաժեշտ ե սոցիալիստական մրցակցությանը հատուկ նշանակություն տալ:

Այսպես՝ որինակ, «Կրասնիյ Պուտիլովեցը» 1928—29 թվականի առաջին յեռամսյակում ծրրագրի 86,2⁰/₀-ն ե կատարել, իսկ 2-րդ յեռամսյակում՝ սոցիալիստական մրցակցությունն սկսելուց հետո, — 104,4, ապրիլին — 107,8⁰/₀: 1-ին յեռամսյակում ինքնարժեքն իջել եր միայն 3,5⁰/₀-ով, 2-րդ յեռամսյակում՝ 12,1⁰/₀-ով:

Տվերում վագոնի գործարանին առաջադրված եր ինքնարժեքն իջեցնել 9⁰/₀-ով: Սոցիալիստական մրցակցության հետևանքով բանվորներն այդ առաջադրությունը մի փոքր ավելիով կատարեցին 3 յեռամսյակում: 927 հազար ուրլու ընդհանուր տնտեսում ստացվեց: Իսկ առանձին ցեխերն ել ավելի նշանակալից չափով իջե-

ցում ձեռք բերին: Այսպես՝ որինակ, տրանսպոր-
տի ցեխը 49,4⁰/₀ իջեցում տվեց, մեխանիկական
ցեխը՝ 31,2⁰/₀ և այլն:

Այդպիսի որինակներ կան արդյունաբերու-
թյան շատ ճյուղերում:

Սակայն, կան նաև այնպիսի ֆաբրիկաներ
և գործարաններ, վորոնք պայմանագիր են կնքել,
սոցիալիստական մրցակցության մեջ են մտել,
բայց գործով վոչ մի բան չեն արել: Կոշկեղենի
այնպիսի խոշորագույն ֆաբրիկան, ինչպիսին
«Սկորոխոդն» է, վորը հանդիսավոր պարագա-
ներում պայմանագիր եր կնքել կոշկեղենի մյուս
ֆաբրիկայի՝ «Պրոլետարսկայա Պրեդպալի» հետ,
4 ամսից հետո վոչ միայն իր խոստումը չի կա-
տարել, այլև՝ ըստ միջանի ցուցանիշներին, նույն-
խակ վատթարացրել է: Որինակ՝ «Սկորոխոդն»
սկսեց 7,3⁰/₀-ով ավելի պակաս արտադրանք բաց
թողնել, քան բաց եր թողնում մրցակցությունից
առաջ, բրակը շատացել է: «Պրոլետարական
Պրեդպալում» բրակն էլ ավելի չե շատացել:
Պրոդուկտների կողմից էլ այդ ֆաբրիկաներում
գործը նույնպես չափազանց վատ է դրված:

Սոցիալիստական մրցակցության մեջ լուրջ
թերություն է հանդիսանում նաև այն, վոր նրա
մեջ վոչ բոլոր բանվորներն են քաշված: Ուստի
ՀԱՄԿԽ-ը բոլոր բանվորներին ուղղած իր դիմու-

մի մեջ առանձնապես նշում է, թե՛ «անհրաժեշտ է. վոր մենք հասնենք այն բանին, վոր ամեն մի բանվոր գործարանի զարկերակի բարախումն զգար, ամենորյա պայքարը՝ լավագույն արտադրանքի համար, մեքենաների կատարելագործման, գործարանի լավագույն սարքավորման, ինքնարժեքի իջեցման համար և այլն: Պետք է, վոր այդ պայքարն ամեն մի բանվորի մեջ համապատասխան արտադրական խանդավառություն առաջ բերի»:

Սոցիալիստական մրցում կազմակերպելու յեվ ղեկավարելու աշխատանքում արհմիությունները պետք է առաջին շարքումը լինեն:

Այդ բանի կապակցութեամբ խոշոր նշանակութիւնն է ստանում արտադրական խորհրդակցութիւնների աշխատանքը, վորոնց կարևորագույն խնդիրը պետք է լինի ինքնարժեքի իջեցման սխտեմատիկ աշխատանքը այն ծախսերի առանձին հատվածների մանրամասն քննութեան հետ միասին, վորոնք նրա մեջն են մտնում, բանվորական լայն մասսաների նախաձեռնութեան հայտնաբերումը և հսկողութիւնը՝ ինքնարժեքի իջեցման համար նշված միջոցների կենսագործման վրա:

Արհմիութիւնները՝ բանվորական լայն մասսաների ուղարկութիւնը համախմբելով ինքնար-

ժեքի իջեցման համար մղվող պայքարի վրա, արտագրութւան ռացիոնալացման, հուձքի և վառելիքի ռացիոնալ ոգտագործման ճանապարհով, միաժամանակ պետք է առանձնապես սրեն նըրանց ուշադրութւունը բանվորական ուժի ռացիոնալ ոգտագործման, աշխատանքային դիսցիպլինան զանազան ձևերով խախտելու դեմ տարվող պայքարի, մասնավորապես վոչ հարգելի պատճառներով տեղի ունեցող պրոգուլների դեմ մղվող պայքարի և անհիվանդագին ձևով ձեռնարկութւունից ավելորդ բանվորական ուժը վտարելու վրա:

Արհմիութւունները պետք է լայնորեն ծավալեն բանվորական մասսաներին ինքնարժեքն իջեցնելու նշանակութւունը բացատրելու կամպանիան, պետք է պարզաբանեն, թե այդ իջեցումը կարելի չէ կատարել միայն ամբողջ բանվորական դասակարգի ակտիվ մասնակցութւամբ. նրանք պետք է լայնորեն կիրարկեն մրցակցութւան մասնակիցներին քաջալերելու սխտեմը:

Ամեն մի բանվոր պե՛տ է գիտե՛նա, թե միայն ինքնարժեքի իջեցումով, արտադրանքի վորակի բարելավումով յե՛վ աշխատանքի արտադրականության բարձրացումով կարող է աջողությամբ անել մեր սոցիալիսական շինարարությունը յե՛վ բարելավվել բանվոր դասակարգի նյութական յե՛վ կուլտուր-կենցաղային դրությունը:

Ց Ա Ն Կ

	Եջ
I Ինչ ե տալիս ինքնարժեքի իջեցումը .	3
II Ինչպես կարելի յե իջեցնել ինքնարժեքը .	11
III Ինչ ե տալիս սոցիալիստական ռացիոնալացումը և ինչ՝ կապիտալիստականը .	20
IV Ինքնարժեքի իջեցումը և անընդհատ արտադրութիւնը	23
V Ինքնարժեքի իջեցումը և արտադրանքի վորակը	26
VI Արձմիութիւնների դերը ինքնարժեքի իջեցման պայքարում	31



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039199

[084]

Н. Саморуков

744

A $\frac{I}{4191}$

ПОЧЕМУ ПРОФСОЮЗЫ БОРЮТСЯ ЗА
СНИЖЕНИЕ СЕБЕСТОИМОСТИ

Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.

Lined writing area with horizontal lines.

ԳԻՆՆ Ե Ց ԿՈՊ. (1 1/2 Մ.) մաս.